



ԻՇԽԱՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի
պրոֆեսոր, տնտեսագիտության թեկնածու

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի
դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի
դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ԳԱՅԱՆԵ ԱԿԱԳՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի
դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ¹

Աշխարհում տնտեսական աճի տեմպերը դանդաղել են, և ճգնաժամի երկրորդ ալիքը սպառնացող վտանգ է ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրների համար: Նման պայմաններում տնտեսական աճի հիմնախնդիրը արդիական է, և կարևորվում է տնտեսական աճի խթանման արդյունավետ մեխանիզմների որոնումը: Յուրաքանչյուր ժամանակաշրջան, չթերաքնահատելով նախորդի գիտական հաջողությունները, առաջադրում է տնտեսական աճ ապահովելու կամ աճն արագացնելու ուրույն լուծումներ: ՀՀ տնտեսական աճը մեծապես պայմանավորված է ամրողական պահանջարկի բաղկացուցիչների տատանումներով, իրական և ֆինանսական հատվածների փոխգործակցության աստիճանով: Հոդվածում մատնանշվել են ՀՀ տնտեսական աճի վրա ազդող հիմնական գործոնները, էկոնոմետրիկ (տնտեսաշահական) մոդելների կիրառմամբ գնահատվել է դրանց ազդեցության չափը:

¹ Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ «Գիտական և գիտատեխնիկական գործումներության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի «ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը և հեռանկարները» թեմայի ֆինանսավորման շրջանակներում:

Հիմնաբառեր. տնտեսական աճ, գործոն, մոդելավորում, պատճառահետևանքային կապեր, տնային տնտեսությունների սպառում, համախառն կուտակում, արտահանում, վարկեր, ավանդներ, ոչ ռեզիլիենտներից ներգրավված ավանդներ, բյուջեի եկամուտներ և ծախսեր

JEL O11, 4, P24

Տնտեսական աճի վրա ազդող գործոնները տնտեսագետների ուշադրության կենտրոնում են եղել դարեր շարունակ: Տնտեսավարման եղանակների, ինչպես նաև ժամանակի ընթացքում տարրեր տնտեսությունների կողմից ընդունված որոշումների զանազանությունը, գիտության և տեխնիկայի առաջանցիկ տեմպերով զարգացումը ստիպում են տնտեսագետներին հասկանալ, որ ժամանակի ընթացքում փոխվում են հրող ուժերը, հետևաբար նաև տնտեսական աճը պայմանավորող ու դրա վրա ազդող գործոնները:

Տնտեսական աճի գործոնները վերլուծվել են դեռևս Չ. Կոբի և Պ. Շուգահի աշխատանքներում, որոնցում տնտեսական աճի գործոններ են համարվել հեղինակային արտադրական ֆունկցիայի տարրերը²: Այնուհետև Քովելենդն առաջարկել է տնտեսական աճի կառուցվածքի գնահատման համար օգտագործել ազգային հաշիվների մոդելը և արտադրության գործոնների իրական ծախսերի հաշվեկշիռը³: Արտադրության գործոնների ամբողջական արտադրողականության գնահատման առաջին փորձերն առաջարկվել են Թինբերգենի և Ստիգլիի աշխատանքներում⁴: Առավել լայն տարածում են գտել այս բնագավառում Սոլումի, Քենդրիկի, Դրիլիխտսի ու Ջորգենսոնի աշխատանքները⁵: Տնտեսական աճի աղբյուրների բացահայտման սկզբնական ուսումնասիրություններում, այդ թվում Սոլումի և Քենդրիկի աշխատանքներում, արտադրողականության աճը դիտարկվում էր որպես տնտեսական աճի գլխավոր աղբյուր⁶:

Տնտեսական աճի գործոնային վերլուծության մեջ հատկապես կարևոր փում ու բարձր են գնահատման գիտատեխնիկական գործոնի գնահատման Սոլումի և Դենիսոնի մոտեցումները: Դենիսոնը կիրառել է «տնտեսական աճի մնացորդային գործոն» հասկացությունը՝ նկատի ունենալով աշխատանքից, կապիտալից և հողից բացի մյուս բոլոր, մասնավորապես՝ գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված գործոնների ներգործությունը տնտեսական աճի վրա:

² Stiu Cobb C. W. and Douglas P. H., A theory of production. American Economic Review 18(1), 1928, էջ 139–165: Supplement, Papers and Proceedings of the Fortieth Annual Meeting of the American Economic Association:

³ Stiu Copeland M. A., Concepts of National Income, in Studies on Income and Wealth, Vol. 2, New York: National Bureau of Economic Research, 1937, էջ 3–63:

⁴ Stiu Tinbergen J., Zur Theorie der Langfristigen Weltwirtschaftsentwicklung. Weltwirtschaftliches Archiv 55, 1942, էջ 511–49: Stigler G., Trends in Output and Employment, NBER, 1947:

⁵ Stiu Solow R. A., Contribution to the Theory of Economic Growth // Quarterly Journal of Economics. Vol. 70, 1956, էջ 65–94: Kendrick J. W., Productivity Trends in the United States. Princeton N. J., Princeton University Press, 1961, 356–367: Denison E. F., The Sources of Economic Growth in the United States and the Alternatives Before Us. New York: Committee for Economic Development, 1962, էջ 225–24: Jorgenson D. W. and Griliches Z., The Explanation of Productivity Change. Review of Economic Studies 34, 1967, էջ 249–283:

⁶ Stiu Griliches Z., Journal of Economic Literature. Vol. 34, № 3, 1996, էջ 324–330:

Նորեյան մրցանակակիր Ռոբերտ Լուկասն առաջարկել է տնտեսական աճի գործոնների՝ անցումային երկրների պարագայում նպատակահարմար իր դասակարգումը. առաջին խմբում ներառվել են այն գործոնները, որոնք ազդում են տնտեսական աճի վրա խնայողության նորմի փոփոխության միջոցով (քանակական գործոններ), երկրորդ խմբում՝ այն գործոնները, որոնք ազդում են ներդրումների արդյունավետության վրա (որակական գործոններ)⁷:

Տնտեսագիտության տեսության մեջ լայն տարածում է ստացել արտադրության երեքգործոնային տեսությունը: Այս տեսության հետագա վերլուծությունների ժամանակ արտադրության գործոններն ստացան ավելի լայն մեկնաբանություն:


Տնտեսական աճի և աճի վրա ազդող գործոնները փոխկապակցված են և միահյուսված: Արդյունքում՝ տնտեսական աճի վրա ազդող կամ աճն ապահովող այս կամ այն գործոնի բաժինը հստակ որոշել գործնականում հնարավոր չէ: Բոլոր այս խոշոր գործոններն ունեն հավաքական բնույթ և բաղկացած են մանր տարրերից: Տնտեսական զարգացման տարրեր փուլերում առաջնային դերում հանդես է եկել այդ գործոններից որևէ մեկը: Մինչարդյունաբերական տնտեսության շրջանում այդպիսի գործոն էր հողը, իսկ արդյունաբերական դարաշրջանում զարգացում թելադրող գործոն դարձավ կապիտալի կուտակումը: Տնտեսական զարգացում ապահովելու մեխանիզմի մեջ նորամուծությունների դերը նույնպես կախված էր տնտեսական աճի որոշակի փուլից: Նորամուծությունները միշտ եղել են արտադրության կատարելագործման հիմքում և ապահովել են դրա էկոնոմիզիոն զարգացումը: Եվ որքան ինտենսիվ էր բարձրանում արտադրողական ուժերի զարգացման մակարդակը, այնքան մեծ նշանակություն էին ծեռք բերում նորամուծությունները տնտեսական աճի ապահովման մեխանիզմում: Իսկ հետարդյունաբերական տնտեսական համակարգին անցնան պայմաններում նորամուծությունները դաշնում են տնտեսական զարգացման գլխավոր աղբյուրը:

Յուրաքանչյուր մոդել, որը զարգացնում է տնտեսական աճի որևէ գործոնի ազդեցության բավականաչափ նեղ տեսանկյուն, հեռանում է տնտեսական աճի բազային (այդ թվում՝ նորդասական) և ներծին (էնդոգեն) մոդելներից: Առավել նոր մոդելները կարևորում են ԳՏԱ և մարդկային կապիտալի գործոնը՝ փորձելով մոդելավորել ԳՏԱ գործընթացները և մարդկային կապիտալի ազդեցությունը տնտեսական աճի վրա: Սակայն վեճերը մինչ օրս էլ շարունակվում են և դժվար թե դադարեն, քանզի միշտ էլ կգտնվեն երկրներ (ինչպես օրինակ՝ ասիական նորարդյունաբերական երկրները), որոնց աճի շարժընթացը կզարմացնի տնտեսագետներին: Տնտեսական աճը միայն կապիտալի կուտակումով բացատրողները, որոնց կարելի է անվանել «համոզված կուտակողներ», կանդեն, որ տնտեսական աճը միանշանակորեն պայմանավորված է ներդրումների մեծությամբ, և որ յուրաքանչյուր երկիր կարող է կրկնել նորարդյունաբերական երկրների հաջողությունը: Տնտեսական աճը տեխնոլոգիական առաջընթացով և ձեռներեցության բարձր հակվածությամբ բացատրող ծայրահետ «յուրացնողները» կանդեն, որ կարևոր ծերներեցությունն է, գործնական ուսուցումը, տեխնոլոգիաների յուրացումը, իսկ եթե կապիտալի կուտակումը տեղի է ունենում վերոհիշյալ գործոնների թույլ զարգացվածության ֆոնի վրա, ապա արագ տնտեսական աճ չի կարող լինել:

⁷ Տե՛ս Lucas R., On the Mechanics of Economic Development // Journal of Monetary Economics, 1988, էջ 22:

Տնտեսական աճի գործոնների հարցում, մեր կարծիքով, ճիշտ է ավելի կենտրոնամետ մոտեցում ցուցաբերելը, քանի որ տնտեսական աճի բոլոր տեսություններն էլ ունեն նշանակալի արդյունքներ: Պարզապես տնտեսական աճը քննարկելիս անհրաժեշտ է ելնել ոչ միայն մեկ՝ որոշակի մոդելից, այլ ցուցաբերել վերլուծական մոտեցում՝ գոյություն ունեցող մոդելները հարմարեցնելով ուսումնասիրվող երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակին և տնտեսական զարգացման նպատակով առաջարկված խնդիրներին: Հետևապես՝ վերջինիս վրա ազդող գործոնները փորձառական (էնպիրիկ) ձանապարհով ի հայտ բերելը կարևորագույն խնդիր է: Այդ նպատակով առաջարկվում է իրականացնել տնտեսական աճի ուսումնասիրություն էկոնոմետրիկ մոդելի շրջանակում:

Տնտեսական աճը բնութագրելու նպատակով սույն աշխատանքում դիտարկվել է ՀՆԱ իրական ծավալի ինդեքսը (նախորդ տարվա համապատասխան եռամսյակի նկատմամբ) 2001–2017 թթ. առաջին եռամսյակների ընթացքում⁸: Վերջինիս շարժընթացը ներկայացված է ստորև:



Գծապատկեր 1. Տնտեսական աճի շարժընթացը 2001–2017 թթ. առաջին եռամսյակներում

ՀՆԱ իրական ծավալի ինդեքսը գտնվել է [80.26, 119.22] միջակայքում: Նվազագույն մակարդակը արձանագրվել է 2009 թ. երրորդ եռամսյակում՝ 80.26, որը պայմանավորված էր ֆինանսատնտեսական զգնաժամով: Փաստորեն, տնտեսությունը 2009 թ. երրորդ եռամսյակում անկում է ապրել շուրջ 19.74%-ով: Տնտեսական աճի առավելագույն մակարդակը արձանագրվել է 2006 թ. երկրորդ եռամսյակում՝ 119.22 կամ 19.22%: 2001–2016 թթ. եռամսյակային ժամանակահատվածում ՀՆԱ իրական ծավալի ինդեքսը միջինում եղել է 107.11, որը նշանակում է, որ միջինում 7.11% տնտեսական աճ է ապահովվել: Իհարկե, տնտեսական աճ արձանագրելը դրական երևոյթ է, սակայն մտահոգիչը վերջինիս աճի դանդաղեցումն է, որը դիտվում է 2016 թ. երկրորդ եռամսյակում: Նման տնտեսական վարքագիծը արտացոլում է վարվող ոչ համապատասխան և ոչ հասցեական տնտեսական քաղաքականության՝ մեր ժամանակների իրավիճակը:

Տնտեսական աճի վրա ազդեցություն են ունենում և ամբողջական առաջարկը, և ամբողջական պահանջարկը նկարագրող բազմաթիվ գործոններ: Մենք առանձնացրել ենք ոչ թե ցուցանիշների բացարձակ մեծությունները,

⁸ Տես <https://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx>, <http://www.armstat.am/am/?nid=263>

այլ վերջիններիս աճի տեմպերը: Այսինքն՝ մեզ համար կարևոր է դիտարկել ոչ թե ինչպես է, օրինակ, սպառման ծավալն ազդում ՀԱԱ իրական ծավալի ինդեքսի վրա, այլ՝ թե սպառման փոփոխության արագությունը ինչ ազդեցություն է ունենում տնտեսական աճ վրա: Հարցն այս տեսանկյունից դիտարկելն ունի մի շարք առավելություններ:

1. Նախնառաջ հնարավորություն է ստեղծվում ուսումնասիրելու դիտարկելիք տնտեսական ցուցանիշների փոփոխության արագությունը, որի բարձր տեմպեր ապահովելը շատ ավելի բարդ գործընթաց է: Սակայն նշված ցուցանիշների մասով բարձր աճի տեմպեր ապահովելը էական հետևանք է ունենում տնտեսական ողջ համակարգի վրա:
2. Տնտեսական աճը իրական ՀԱԱ փոփոխության արագությունն է, հետևաբար՝ տնտեսական աճի վրա նշված ցուցանիշների փոփոխության արագությունների ազդեցության դիտարկումը առավել հեռանկարային մոտեցում է:

Մողելի փոփոխականների ընտրության սկզբունքները

Փոփոխականների ընտրության համար ուսումնասիրվել է ծավալուն գրականություն տնտեսական աճի մողելների կիրառության օրինակներով: Ուշադրությունից դուրս չեն մնացել << տնտեսական աճի՝ նախկինում արված գործոնային վերլուծության արդյունքները⁹: Ուսումնասիրված գրականության հիմնան վրա ընտրել ենք 7 փոփոխական, որոնք առավել էական են << տնտեսական աճի ապահովման տեսանկյունից: Ընտրված ցուցանիշները միավորվել են 2 խմբում և տարբեր էկոնոմնետրիկ ծրագրերում. աշխատանքի դյուրացման համար կատարվել են ընտրված ցուցանիշների նշանակումներ¹⁰:

Առանձնացրել ենք տնտեսության իրական և ֆինանսական հատվածները նկարագրող հետևյալ գործոնները՝

1. Իրական հատված. տնային տնտեսությունների սպառման (CNMG), հիմնական կապիտալում համախառն կուտակման (INVFCG) և արտահանման (EXPG) իրական ծավալների ինդեքսները:
2. Ֆինանսական հատվածի գործոններ. ռեզիլենտներին տրված վարկերի ծավալի(RLG), ռեզիլենտներից ներգրավված ավանդների ծավալի (RSG), ոչ ռեզիլենտներից ներգրավված ավանդների ծավալի (NRSG), բյուջեի եկամուտների և ծախսների տարբերության ծավալի (BDG) աճի տեմպերը:

Տնտեսության նշված հատվածները նկարագրող գործոնների միջոցով տնտեսական աճի վերլուծությունն էլ ավելի խորացված է, որի արդյունքները կարող են կիրառվել նշված հատվածների փոխգործակցությանը և համահունչ զարգացմանը նպաստող տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացով:

Էապես ազդեցիկ գործոնների առանձնացման նպատակով իրականացվել է նշված գործոնների և տնտեսական աճի միջև կոռելյացիոն վերլուծություն, որի արդյունքները ամփոփված են ստորև բերված այլուսակում.

⁹ Տե՛ս Ի. Տիգրանյան, Լ. Կարապետյան, << տնտեսական աճի գործոնային վերլուծություն, Եր., «Բանբեր ՀՊՏՀ», 3(31), էջ 67–75. http://media.asue.am/upload/Ban_2013.3-3_MAKRO.pdf

Ա. Թավաղյան, Հ. Հովհաննիսյան և ուրիշներ, Մակրոտնտեսական վերլուծություն, մոդելավորում և կանխատեսում: Հետազոտական աշխատանքի հաշվետվություն, Եր., «Ամբերդ», մատենաշար, 12. http://media.asue.am/upload/amberd_matenagrer/12_Tavadyan_nor_.pdf

¹⁰ Նշանակումները ներկայացված են փակագծերում:

Աղյուսակ 1

Կոռելյացիոն վերլուծության արդյունքները¹¹

	<i>CNMG</i>	<i>INVFCG</i>	<i>EXPG</i>	<i>g</i>	<i>NRSG</i>	<i>RLG</i>	<i>RSG</i>	<i>BDG</i>
<i>CNMG</i>	1							
<i>INVFCG</i>	0.55	1						
<i>EXPG</i>	-0.23	-0.03	1					
<i>g</i>	0.65	0.85	0.08	1				
<i>NRSG</i>	-0.18	-0.33	-0.37	-0.46	1			
<i>RLG</i>	0.54	0.36	-0.60	0.30	0.46	1		
<i>RSG</i>	0.54	0.34	-0.23	0.41	0.13	0.48	1	
<i>BDG</i>	-0.11	-0.18	-0.22	-0.40	0.01	0.09	-0.01	1

Կոռելյացիոն վերլուծության արդյունքները փաստում են, որ տնտեսական աճի և կապիտալ ներդրումների իրական ծավալի ինդեքսների միջև առկա է ուժեղ կախվածություն բավականին մեծ գործակցով՝ 0.85, երկրորդ տեղում սպառման իրական ծավալի ինդեքսն է՝ 0.65, ամենացածր կոռելյացիան նկատվում է տնտեսական աճի և ռեզիլիենտներին տրամադրվող վարկերի ծավալի աճի տեմպերի միջև՝ -0.30:

Էկոնոմետրիկ մոդելի առաջադրումը և գնահատումը

Հիմք ընդունելով վերը շարադրված տեսական մոտեցումները և կոռելյացիոն վերլուծության արդյունքները՝ դիտարկենք հետևյալ էկոնոմետրիկ մոդելը¹²:

$$\delta_t = \delta_0 + \delta_1 CNMG_t + \delta_2 INVFCG_t + \delta_3 RSG_t + \delta_4 NRSG_t + \delta_5 EXPG_t + \delta_6 BDG_t + \varepsilon_t \quad (1)^{10}$$

Ընդ որում, դիտարկվել է 2003 թ. առաջին եռամյակից մինչև 2016 թ. երկրորդ եռամյակն ընկած ժամանակահատվածը:

(1) մոդելը գնահատվել է փոքրագույն քառակուսիների եղանակով¹¹: Ստացված արդյունքները վկայում են, որ առկա են մի շարք խնդիրներ: Մասնավորապես՝ որոշ գործոններ նշանակալի չեն, մոդելում առկա է հետերոսկետաստիլություն¹² և ավտոկոռելյացիա¹³: Նշված երևույթներից զերծ մնալու համար նախևառաջ դիտարկվել է բոլոր փոփոխական-շարքերի ստացինարության խնդիրը¹⁴: Դրվել է Դիքի-Ֆուլերի թեսալը¹⁵ յուրաքանչյուր շարքի հա-

¹¹ Տե՛ս Էկոնոմետրիկա: սկզբ. /под ред. И.И. Елисеевой/. М., “Проспект”, 2009, էջ 54–66:

¹² Տե՛ս Ռազաև Ю. В., Теория экономического роста, учебн. пособие для вузов. М., Изд. дом ГУ ВШЭ, 2006, էջ 22–35:

¹⁰ Տե՛ս ՀՆԱ իրական ծավալի ինդեքսն է կամ տնտեսական աճը t-րդ եռամյակում, *CNMG*-ն՝ տնտեսությունների սպառման իրական ծավալի ինդեքսը t-րդ եռամյակում, *INVFCG*-ն՝ իհմանական կապիտալի համախառն կուտակման իրական ծավալի ինդեքսը t-րդ եռամյակում, *RSG*-ն՝ ռեզիլիենտներից ներգրավված ավանդների ծավալի աճի տեմպը t-րդ եռամյակում, *NRSG*-ն՝ ոչ ռեզիլիենտներից ներգրավված ավանդների ծավալի աճի տեմպը t-րդ եռամյակում, *EXPG*-ն՝ արտահանման իրական ծավալի ինդեքսը t-րդ եռամյակում, *BDG*-ն՝ բյուջեի եկամուտների և ծախսերի տարբերության ծավալի աճի տեմպը t-րդ եռամյակում, *g*-ն՝ մոդելի անհայտ պարամետրերը, *e*-ն՝ մոդելի պատահական պահանջմանը համապատասխան բարձր տեղական աճի մոդելը t-րդ եռամյակում:

¹¹ Տե՛ս Մագնուս Յ.Р., Կատիշև Պ.Կ., Պերեսեցկի Ա.Ա., Էկոնոմետրիկա, Մ., “Дело”, 2004, էջ 10:

¹² Տե՛ս <https://ru.wikipedia.org/wiki/%D0%93%D0%B5%D1%82%D0%B5%D1%80%D0%BE%D1%81%D0%BA%D0%BA%D0%85%D0%84%D0%8C>

¹³ Տե՛ս Էկոնոմետրիկա: սկզբ. /под ред. И.И. Елисеевой. Աշվ. իրատ., էջ 221–223:

¹⁴ Տե՛ս Մագնուս Յ.Р., Կատիշև Պ.Կ., Պերեսեցկի Ա.Ա., Աշվ. աշխ., էջ 276–285:

¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 266–275:

մար: Ստացված արդյունքները ցույց են տվել, որ բոլոր շարքերը ոչ ստացին նար են, և մոդելում հարկ է դրանք դիտարկել կրկնակի տարբերություններով: Ավտոկոռելյացիան բացառելու նպատակով մոդելում ուսումնասիրվել է տնտեսական աճի նախորդ եռամսյակի ազդեցությունը տվյալ եռամսյակի վրա: Մոդելի որակական հատկանիշները լավացնելու նպատակով որոշ բացարող փոփոխականներ դիտարկվել են լազերով: Արդյունքում ստացվել է հետևյալ մոդելը.

$$D(D(g_t)) = \delta_0 + \delta_1 D(D(CNMG_t)) + \delta_2 D(D(INVFCG_t)) + \delta_3 D(D(RSG_{t-1})) + \delta_4 D(D(NRSG_{t-2})) + \delta_5 D(D(EXPG_{t-3})) + \delta_6 D(D(BDG_{t-4})) + \delta_7 D(D(g_{t-1})) + \epsilon_t \quad (2)^{16}$$

(2) մոդելը գնահատվել է փոքրագույն քառակուսիների եղանակով, և ստացվել է հետևյալ պատկերը.

Աղյուսակ 2

Սոլել (2)-ի գնահատման արդյունքները¹⁷

Dependent Variable: D(D(EG))				
Method: Least Squares				
Sample(adjusted): 2004:3 2016:2				
Included observations: 48 after adjusting endpoints				
White Heteroskedasticity-Consistent Standard Errors & Covariance				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
D(D(CNMG))	0.28	0.0884	3.22	0.0025
D(D(INVFCG))	0.22	0.0440	4.99	0.0000
D(D(RSG(-1)))	0.15	0.0732	2.09	0.0423
D(D(NRSG(-2)))	-0.05	0.0183	-2.71	0.0100
D(D(EXPG(-3)))	0.09	0.0339	2.72	0.0096
D(D(BDG(-4)))	0.002	0.0007	2.59	0.0133
D(D(EG(-1)))	-0.36	0.1149	-3.14	0.0032
C	-0.09	0.7105	-0.14	0.8895
R-squared	0.75	Mean dependent var	-0.11	
Adjusted R-squared	0.71	S.D. dependent var	9.06	
S.E. of regression	4.86	Akaike info criterion	6.15	
Sum squared resid	945.28	Schwarz criterion	6.46	
Log likelihood	-139.64	F-statistic	17.59	
Durbin-Watson stat	2.58	Prob(F-statistic)	0.0000	

(2) գնահատված մոդելը կունենա հետևյալ միջանկյալ տեսքը.

$$D(D(g_t)) = 0.28D(D(CNMG_t)) + 0.22D(D(INVFCG_t)) + 0.15D(D(RSG_{t-1})) - 0.05D(D(NRSG_{t-2})) + 0.09D(D(EXPG_{t-3})) + 0.002D(D(BDG_{t-4})) - 0.36D(D(EG(-1))) \quad (3)^{18}$$

¹⁶ $D(D(g_t))$, $D(D(CNMG))$ և $D(D(INVFCG))$ -ն համապատասխան փոփոխականներն են կրկնակի տարբերություններով, $D(D(g_{t-1}))$ -ն՝ տնտեսական աճի t-1-րդ եռամսյակի մակարդակը կրկնակի տարբերությամբ, $D(D(NRSG_{t-2}))$ -ն՝ ռեզիլենտներից ներգրավված ավանդների աճի տեմպի t-1-րդ եռամսյակի մեջությունը՝ կրկնակի տարբերությամբ, $D(D(EXPG_{t-3}))$ -ն՝ ոչ ռեզիլենտներից ներգրավված ավանդների ծավալի աճի տեմպի մեջությունը t-2-րդ եռամսյակում՝ դիտարկված կրկնակի տարբերությամբ, $D(D(BDG_{t-4}))$ -ն՝ արտահաման իրական աճի տեմպի t-3-րդ եռամսյակի մեջությունը՝ կրկնակի տարբերությամբ, $D(D(EG_{t-1}))$ -ն՝ բյուջեի եկամուտների և ծախսերի տարբերության ծավալի աճի տեմպը t-4-րդ եռամսյակում՝ դիտարկված կրկնակի տարբերությամբ, $\delta_0, \delta_1, \dots, \delta_7$ -ը՝ մոդելի անհայտ պարամետրերը:

¹⁷ Stata <http://www.eviews.com/home.html>

¹⁸ $D(D(g_t))$ -ն կրկնակի տարբերությամբ դիտարկված տնտեսական աճի մեջության կանխատեսվող արժեքն է:

Գնահատված մոդելը բարձր որակի է, քանի որ բոլոր որակական ցուցանիշները համապատասխանում են էկոնոմետրիկայի չափանիշներին¹⁹: Մոդելում ավտոկոռելյացիա չկա, եղել է հետերոսկեղատիկություն, որը հաշվի է առնվել համապատասխան գործակիցների ստանդարտ սխալները ներկայացնելով Նկե-Վեսթի կառուցվածքով: Բոլոր գործակիցները, բացի ազատ անդամից, նշանակալի են:

(3) մոդելում կատարելով որոշակի ծևափոխություններ՝ կստանանք վերջնական գնահատված հետևյալ մոդելը.

$$\hat{g}_t = 70.94 + 0.28CNMG_t + 0.22INVFCG_t + 0.15RSG_{t-1} - 0.05NRSG_{t-2} + 0.09EXPG_{t-3} + 0.002BDG_{t-4} - 0.36EG_{t-1} \quad (4)$$

Որտեղ \hat{g}_t -ն տնտեսական աճի կանխատեսվող²⁰ արժեքն է t -րդ եռամյակում:

Մոդելի (գործակիցների) տնտեսագիտական մեկնաբանությունը

- Առանձնացված բոլոր գործոնները նշանակալիորեն ազդում են տնտեսական աճի վրա, բացառությանք՝ ռեզիլիենտներին տրամադրած վարկերի ծավալի աճի տեմպի:
- Տնային տնտեսությունների՝ տվյալ եռամյակի սպառնան իրական ծավալի ինդեքսը դրական որեւն է ազդում տնտեսական աճի վրա: Մասնավորապես՝ սպառնան 1% աճը, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է միջինում տնտեսական աճի մոտավորապես 0.3% աճի:
- Տվյալ եռամյակի համախառն կուտակման իրական ծավալի ինդեքսի 1% աճը, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է միջինում 0.2% տնտեսական աճի:
- Ռեզիլիենտներից և ոչ ռեզիլիենտներից հավաքագրված ավանդների աճի տեմպերն ազդում են տարբեր լազերով և տարբեր կերպ: Մասնավորապես՝ ռեզիլիենտներից ներգրավված ավանդների աճի տեմպի 1%-ով աճը տվյալ եռամյակում, այլ հավասար պայմաններում, կիանգեցնի հաջորդ եռամյակի մոտավորապես 0.15% տնտեսական աճի: Սակայն ոչ ռեզիլիենտներից ստացված ավանդների աճի տեմպը հանգեցնում է հաջորդ երկու եռամյակ հետո տնտեսական աճի անկանոն՝ մոտ 0.05%-ով:
- Արտահանման իրական ծավալի ինդեքսը ազդում է դրականորեն, սակայն երեք լագ ուշացումով: Այսինքն՝ եթե տվյալ եռամյակում արտահանման իրական ծավալի ինդեքսը աճի 1%-ով, ապա ՀՆԱ իրական ծավալը, այլ հավասար պայմաններում, երեք եռամյակ հետո միջինում կաճի 0.09%-ով:
- Եթե տվյալ եռամյակում տեղի է ունեցել բյուջեի ավելցուկի ցուցանիշի տեմպի աճ 1%-ով, ապա, այլ հավասար պայմաններում, սական կիանգեցնի տնտեսական աճի 0.002%-ով՝ 4 եռամյակ հետո: Եթե տվյալ եռամյակում տեղի է ունեցել բյուջեի պակասուրդի աճ 1%-ով, ապա 4 եռամյակ հետո կնկատվի տնտեսական աճի անկում միջինում 0.002%-ով:

¹⁹Տես **Մագնոս Յ.Պ., Կատիշև Պ.Կ., Պերսেցկի Ա.Ա.**, Աշվ. աշխ., էջ 72–73:

²⁰Տես **Марно В.**, Путеводитель по современной эконометрике. Пер. с англ. В. А. Банникова. Научн. ред. и предисл. С. А. Айвазяна. М., “Научная книга”, 2008, էջ 32–33:

- Տնտեսության պարբերաշրջանային բնույթով պայմանավորված՝ նախորդ եռամսյակի տնտեսական աճի 1% աճը հանգեցնում է տվյալ եռամսյակի տնտեսական աճի անկման՝ 0.36%-ով:

Օգտագործված գրականություն

1. Տիգրանյան Ի., Կարապետյան Լ., «Հ տնտեսական աճի գործոնային վերլուծություն, Եր., «Բանբեր ՀՊՏՀ», 3(31), 2013.
http://media.asue.am/upload/Ban_2013.3-3_MAKRO.pdf
2. Թավաղյան Ա., Հովհաննիսյան Հ. և ուրիշներ, Մակրոտնտեսական վերլուծություն, մոդելավորում և կանխատեսում: Հետազոտական աշխատանքի հաշվետվություն, Եր., «Ամբերդ» մատենաշար, 12,
http://media.asue.am/upload/amberd_matenagrer/12_Tavadyan_nor_pdf
3. Эконометрика: учеб. /под ред. И.И.Елисеевой/. М., “Проспект”, 2009.
4. Шараев Ю.В., Теория экономического роста /учеб. пособие для вузов/. М., Изд. дом ГУ ВШЭ, 2006.
5. Магнус Я.Р., Катышев П.К., Пересецкий А.А., Эконометрика. М., издательство “Дело”, 2004.
6. Марно В., Путеводитель по современной эконометрике. /Науч. ред. и предисл. С. А. Айвазяна/. М., “Научная книга”, 2008.
7. Cobb C. W. and Douglas P. H., A theory of production. *American Economic Review* 18(1), 1928. Proceedings of the Fortieth Annual Meeting of the American Economic Association.
8. Copeland M. A., Concepts of National Income, in Studies on Income and Wealth, Vol. 2, New York: National Bureau of Economic Research, 1937.
9. Tinbergen J., Zur Theorie der Langfristigen Wirtschaftsentwicklung. *Weltwirtschaftliches Archiv* 55, 1942. Stigler G. Trends in Output and Employment, NBER, 1947.
10. Solow R. A., Contribution to the Theory of Economic Growth // Quarterly Journal of Economics, Vol. 70, 1956.
11. Kendrick J. W., *Productivity Trends in the United States*. Princeton N.J.: Princeton University Press, 1961.
12. Denison E. F., *The Sources of Economic Growth in the United States and the Alternatives Before Us*. New York: Committee for Economic Development, 1962.
13. Jorgenson D. W. and Griliches Z., The Explanation of Productivity Change. *Review of Economic Studies* 34, 1967.
14. Griliches Z., Journal of Economic Literature, Vol. 34, № 3, 1996.
15. Lucas R., On the Mechanics of Economic Development // Journal of Monetary Economics, 1988.
16. <https://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx>,
<http://www.armstat.am/am/?nid=263>
17. <http://www.eviews.com/home.html>
18. <https://ru.wikipedia.org/wiki/%D0%93%D0%B5%D1%82%D0%B5%D1%80%D0%BE%D1%81%D0%BA%D0%B5%D0%B4%D0%B0%D1%81%D1%82%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D1%8C>

ИШХАН ТИГРАНЯН

Профессор кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук

АЙКАЗ ОГАНЕСЯН

Доцент кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук

КНАРИК ВАРДАНЯН

Доцент кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук

ГАЯНЭ АВАКЯН

Доцент кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук

Анализ факторов, влияющих на экономический рост РА. – Темпы экономического роста в мире замедлились, и вторая волна кризиса – угрожающая опасность как для развивающихся, так и развитых стран. В этих условиях проблема экономического роста является актуальной, и очень важен поиск эффективных механизмов стимулирования экономического роста.

Каждая эпоха, недооценивая научные достижения предыдущего периода, выдвигает свои собственные решения для ускорения или обеспечения экономического роста. Экономический рост РА, в основном, обусловлен колебанием компонентов совокупного спроса, степенью взаимодействия реальных и финансовых секторов. В статье определены основные факторы, влияющие на экономический рост РА, с использованием эконометрических моделей оценена степень их воздействия.

Ключевые слова: экономический рост, фактор, моделирование, причинно-следственные связи, потребление домашних хозяйств, валовое накопление, экспорт, кредиты, депозиты, депозиты нерезидентов, доходы и расходы бюджета.

JEL O11, 4, P24

ISHKHAN TIGRANYAN

*Professor at the Chair of Macroeconomics at ASUE,
PhD in Economics*

HAYKAZ HOVHANNISYAN

*Associate Professor at the Chair of Macroeconomics at ASUE,
PhD in Economics*

QNARIK VARDANYAN

*Associate Professor at the Chair of Macroeconomics at ASUE,
PhD in Economics*

GAYANE AVAGYAN

*Associate Professor at the Chair of Macroeconomics at ASUE,
PhD in Economics*

Analysis of Factors Influencing the Economic Growth of the RA.

RA.— The rates of economic growth have slowed down in the world and the second wave of crisis is a threatening danger both for the developed and developing nations. In such conditions the issue of economic growth is urgent and it is important to look for effective mechanisms for promoting it. Each period, without evaluating the scientific achievements of the previous period, proposes its own solutions to ensure and speed up economic growth. The economic growth of the RA is largely conditioned by fluctuations in the components of full demand, with the degree of interaction between the real and financial sectors. In this article the main factors influencing the economic growth in the RA are pointed out and the size of their impact is estimated using the econometric models.

Key words: *economic growth, factor, modeling, cause-and-effect relationships, household consumption, gross savings, export, credits, deposits, non-residents' deposits, budget revenues and expenses.*

JEL O11, 4, P24